№ 29 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ
1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ № 29

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆօն № 2—58.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1913 Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.: Փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը 85 կոպ.:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ.

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետեւեալ 2 գրքերը.

1) „Մշակ“ եւ հայ կինը“, որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանաստեղծութիւնները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիւր պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) „Մշակի“ քառասնամեակ“ Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրայ: Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները:

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.: Ճանապարհածախքը՝ 15—20 կոպ. գրքի վրա:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal “MSCHAK”.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

Սոֆիա Կարապետեան Ղազազեանը իր որդիներանցով, խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց կրած անփոխարինելի կորուստը, առաջինը իր սիրելի ամուսնու, վերջիններն իրանց թանգագին հօր՝

Բժիշկ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱԶԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 31-ին: Յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, փետրվարի 7-ին, առաւօտեան ժամը 10½-ին, բնակարանից (Գուդովիչա փողոց № 9) դէպի Քամոյեան եկեղեցին:
Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: (Պսակներ և ծաղիկներ չեն լինելու):
93. 2—2

Յովհաննէս Կարապետեան և Լիւզիա Կարլօվնա Մուշաֆեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին իրանց սիրելի փեսայի՝

Բժիշկ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱԶԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 31-ին: Յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, փետրվարի 7-ին, առաւօտեան ժամը 10½-ին, բնակարանից (Գուդովիչա փողոց № 9) դէպի Քամոյեան եկեղեցին:
Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 94. 2—2

Մուխրանեան Մասնաւոր Բուժարանի բժիշկներն ու ծառայողները խորին վշտով յայտնում են

Բժիշկ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱԶԵԱՆԻ

յանկարծակի մահը: Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, փետրվարի 7-ին, առաւօտեան ժամը 10½-ին բնակարանից (Գուդովիչա փողոց, № 9) դէպի Քամոյեան եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:
(Այսօր Բուժարանում հիւանդների ընդունելութիւն չի լինի):
97. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բարիշչէվսկայա 13, տելէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:
Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Ջ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Տաղպարոնեանց: Կօնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբոտին:
(հ.կ.) առ. 779. 100—29

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը / երեկ. ժ. 5—7-ը
Միխայլովսկի պր. 86, տելէֆ. № 576.
(ե.հ.կ.) առ. 179. 100—89

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս թոքերի:
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեւմատօրակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ. / երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Բարիշչէվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(ե. հ. կ.) առ. 746. 100—53

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՈՒՐԲԱԹ, ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Չորրորդ անգամ կը ներկայացնէ Լ. Շանթի
ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ
Դրամա 4 արար. և 12 պատկերով:
◆ Մասնակցում է ամբողջ խումբը: ◆
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
Ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
ԱԶԴ.—Երկուշաբթի, փետրվարի 11-ին, տիկին Մայսուրեանի բենեֆիսին կը ներկայացվի առաջին անգամ հայ բեմի վրա «ՈՍԿԷ ՎԱՆԴԱԿ» պիէսը 5 գործ., Օստրովսկիի: 98. 2—1

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի:
Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա): Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—3

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Բարիշչէվսկայա № 1.
առ. (կ. ե. հ.) 4. 100—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԼԻՕՆՋԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Արաս-Արադսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 849. 0—11

ԱՆՕԳՈՒՏ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Երէկվայ մեր յօդուածում մենք այն կարծիքն արտայայտեցինք, որ Թիւրքիան չէ կարող որևէ յոյս դնել եւրոպական մեծ պետութիւնների միջամտութեան վրա, որովհետև նոյնիսկ Թիւրքիային մինչև այժմ բարեկամ համարված Գերմանիան և Աւստրիան հոգատար են աւելի իրանց անձնական շահերը ապահովել, քան թէ որևէ օգնութիւն ցոյց տալ պարտված և հոգեվարքի մէջ գտնվող Թիւրքիային:

Շատ ճիշդ է նկատում ռուսական «Рус. Слово» թերթը, թէ նոյն իսկ Ալբանիայի խնդրում, որի մէջ բալկանեան դաշնակից տէրութիւնները կամենում էին օգնել Թիւրքիային և պահպանել սուլթանի վեհապետական իրաւունքները նրա վրա, եւրոպական մեծ պետութիւնները և հէնց Աւստրիան ու Իտալիան ամենևին մտադիր չեն խնայել Թիւրքերի ինքնասիրութիւնը: Եւրոպական դիպլոմատիան ընդդիմանալով Ալբանիայի բաժանման բալկանեան դաշնակիցների միջև՝ որոշել է սուլթանի վեհապետութիւնը փոխարինել մեծ պետութիւնների հովանաւորութեամբ: Աւստրիան և Իտալիան ամբողջ ժամանակ աշխատում են նոյն իսկ ստեղծել մի խիմէրական Մեծ Ալբանիա, որի մէջ պէտք է մտնեն բոլոր այն վայրերը, ուր ալբանցիները ազգաբնակութեան գէթ կէսն են կազմում: Եւ ինչու նրանք այդպէս հոգատար են: Որովհետև յոյս ունեն, որ ապագայում կը կլանեն կամ կը բաժանեն իրանց միջև այդ Մեծ Ալբանիան:

Ուրեմն Ալբանիան ընդմիշտ կորած պէտք է համարել Թիւրքիայի համար, և այն էլ շնորհիւ իր բարեկամների՝ Աւստրիայի և Գերմանիայի: Կորած պէտք է համարել և Եգէյեան ծովի այն կղզիները—Լեսբոս, Քիոս, Սամոս—որոնք հոծ կերպով բնակված լինելով յոյներով՝ բաւական հեռու լինելով Դարդանէլից, ձգտում են անտեսապէս դէպի Յունաստանը: Հաւանական է, որ մեծ պետութիւնները թողնեն Թիւրքիային այն կղզիները—ինչպէս Թենեդոս, Սամաթրակիա, Իմբրոս և Լեմնոս—որոնք գտնվում են Դարդանէլին շատ մօտ, որովհետև նրանք անհրաժեշտ են Թիւրքիային, իբրև բնական շարունակութիւն Գալիպօլեան թերակղզու, և առանց նրանց՝ նաւարկութեան ազատութիւնը Դարդանէլի միջով չէ կարող ապահով լինել:

Եւ ուրեմն Թիւրքիան ստիպված կը լինի շատ շուտով զիջել թէ Ադրիանուպօլիսը, թէ Եգէյեան կղզիներից շատերը: Նա արդէն զրկվեց և այն անուանական վեհապետութիւնից, որ ունէր Կրետէ կղզու վրա: Երջանիկ պէտք է համարէ նա իրան, եթէ բալկանեան դաշնակիցները պատերազմական տուգանք էլ չը պահանջեն:

Պարզ է, որ երիտասարդ-թիւրքերը իրանց կատարած պետական հարուածով ոչինչ չը շահեցին, այլ, ընդհակառակը, մատնեցին երկիրն աւելի մեծ վտանգների և կորստեան:

Պէտք է գալ այն եզրակացութեան, որին հասել են այժմ շատերը, թէ Թիւրքական իշխանութեան օրերը համարված են Եւրոպական Թիւրքիայում: Վաղ թէ ուշ Թիւրքիան պէտք է կորցնէ իր եւրոպական բոլոր տիրապետութիւնները, նոյն իսկ Կ. Պոլիսը, և ստիպված պէտք է լինի ամփոփվել Անատոլիայի մէջ, որովհետև Ռումելիան այլ ևս կորած պէտք է համարել նրա համար:

Եւ որովհետև չը կայ երևոյթ առանց պատճառի, ուստի Թիւրքերը հնձում են այսօր, ինչ որ սերմանեցին իրանց հայրերը:

Մեծամտութիւնը, ֆանատիկոսութիւնը, անհամբերողութիւնը և այն անոտի հաւատը, թէ իրանք Ալլահի ընտրեալ զաւակներն են, թէ իրանք ստեղծագործված են միշտ իշխելու, վայելելու առանց աշխատելու, այդ ամենը բերեց նրանց գլխին այսօրվայ աղէտը, որի ծանրութեան ներքոյ նրանք պէտք է ընկճվեն և ույժ չունենան ոտքի կանգնելու:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 փետրվարի

Պետերբուրգ.—Պաշտօնական: Պետ. Հեռ. Գործակալութիւնը տեղեկացաւ հեղինակաւոր աղբիւրներից, որ ընդհանուր քաղաքական դրութիւնը՝ բոլգար ռումինական բանակցութիւնները ի տես ունենալով՝ հիմք չէ տալիս մամուլի որոշ մասին յոռետես տրամադրվելու: Այն դէպքում, եթէ այդ անմիջական բանակցութիւնները յիրաւի չը յանգեն լիակատար համաձայնութեան, երկու կառավարութիւնները հնարաւորութիւն ունեն իրանց վէճը մեծ պետութիւնների վճռին յանձնել: Հիմք կայ կարծելու, որ Ռումինիայում և Բոլգարիայում հաւասարապէս հաշւի կառնեն այն լուրջ պատասխանատւութիւնը, որպիսին բաժին կընկնէ այն երկրին, որ կը դիմէ ույժի, չը սպառելով տարաձայնութիւնները լուծելու բոլոր խաղաղ եղանակները: Վերջապէս, բոլոր մեծ պետութիւնները ձգտում են հարցի լուծումը ուղղել խաղաղ ճանապարհով՝ ընդհարման հնարաւորութիւնը վերացնելու միահամուռ ցանկութեամբ:

Բերլին.—Արտաքին գործերի մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն՝ ռումին-բոլգարական միջադէպը հարթելու յոյսերը փոքր ինչ ակներև են դառնում: Մեծ պետութիւնները մի մեծ պետութիւնից առաջարկութիւն են ստացել միջնորդ լինել, որպիսի հանգամանքը ըստ երեւոյթին ելակէտ կը լինի դժուարութիւններից:

Բուխարէստ.—Կ. Պոլսից հեռագրում են, որ կիրակի օրը անսպասելի կերպով արգելվեց կողմնակի անձանց մուտքը Բ. Դուռը: Լուրեր պտտվեցին, թէ իբր պատրաստվում է պետական յեղաշրջում: Սպասվում է կաբինէտի փոփոխութիւն:

Բուխարէստ.—Կ. Պոլսից հաղորդում են. «Հրէայ սեղանաւորները, քննելով ներքին փոխառութեան ստորագրվելու հարցը, վճռեցին դիմել արտասահմանեան հրէաներին՝ խնդրելով օգնել դրամական ստորագրութեամբ երիտասարդ-թիւրքերի կոմիտէին և կառավարութեանը: Հրէայ երիտասարդութիւնը վճռել է կազմակերպել քաղաքային կամաւորների գունդ՝ կարգ ու կանոնի պահպանութեան համար:

«Ռումէլիայի բոլոր պաշտօնեաները, որոնք այժմ գտնվում են Կ. Պոլսում, ներկայացան ֆինանսների մինիստրութեանը և պահանջեցին իրանց վերջին հինգ ամիսների ռոճիկները: Մինիստրը հրաժարվեց ընդունել պատգամաւորներին: Պաշտօնեաները աղմկեցին, բայց զինւորները ցրեցին նրանց: Շատերը կալանաւորվեցին: Լուրերի համաձայն՝ ամբողջ պետութեան պաշտօնեաները բանակցութիւններ են վարում ընդհանուր գործադուլի մասին, եթէ կառավարութիւնը չը վճարէ չը տրված ռոճիկները:

«Պ. Հ. Գ. թղթակցի տեղեկութիւնների համաձայն՝ Փոքր Ասիայում ընդարձակ ծաւալով գրաւվում են զօրքին անհրաժեշտ ապրանքները: Կ. Պոլ[illegible]ներին դեռ հանգիստ են թողնում»:

Լոնդոն.—Փետրվարի 8-ին դեսպանների խորհրդակցութեան առարկան լինելու է Ալբանիայի սահմանների որոշման հարցը:

Վիեննա. — «Միլիտ. Ռունդշաուի» տեղեկութիւնների համաձայն, «Կէյզեր-Կէնիգէն», «Մարիա Թերէզա» և «Կէյզերին Էլիզաբէտ» ռազմանաւերը մեկնել են Զմիւռնիայից: Վերջինը գնում է Կ. Պոլիս, առաջինը պաշտպանելու է աւստրո ունգարական շահերը Եգէյեան ծովում:

Պարիզ.—Բրիանը սպառազինման մասին ուղղված հարցապնդմանը պատասխանեց, որ կառավարութիւնը քննում է սպառազինման բարելաւման հարցը. վճռական որոշում դեռ կայացված չէ. մինչև Զատիկը պալատին կառաջարկվի յատկացնել 500—600 միլիոն 5—6 տարիների ընթացքում՝ նոր սպառազինման համար: Զինւորական մինիստրութիւնը ուսումնասիրում է զինւորական ծառայութեան երկարատեւութեան հարցը. երբ այդ կը քննէ մինիստրների խորհուրդը ևս, կը ներկայացվի վերջնական վճիռ:

Ելիսեան պալատում Ֆալիէրը, շրջապատված բոլոր մինիստրներից և պալատի ու սենատի նախագահներից, ընդունեց Պուանկարէին և յանձնեց պրեզիդենտի լիազօրութիւնները: Պալատից Պուանկարէն մեկնեց քաղաքային ինքնավարութիւն, ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն: Փողոցներում ամբոխը ցնծագին ողջունում էր նրան: Քաղաքային ինքնավարութեան մէջ ներկայ եղան Ֆալիէրը և Լուբէն: Հանրապետութեան նոր պրեզիդենտը գոհունակութիւն յայտնեց՝ Ֆալիէրին և Լուբէին Պարիզի ազգաբնակութեան ընդհանուր օջախի մօտ տեսնելու համար և ասաց, որ խորապէս զգացված է դէպի ինքը ցոյց տրված համակրանքից և տեսնում է այդ ամենի մէջ երկրի վստահութեան անգնահատելի գրաւականը: Քաղաքագլուխը ոսկէ մէդալներ յանձնեց բոլոր երեք պրեզիդենտներին. յետոյ Պուանկարէն գնաց Ելիսեան պալատ, իսկ Ֆալիէրը մեկնեց իր մասնաւոր բնակարանը:

Բերլին.—Րէյխստագ: Կենտրոնը յետ վերցրեց իր բանաձևը, որով մերժում էր աւելացնել ծովային օֆիցերների ռաճիկները, որի պատճառով սպառնաց հրաժարվել ծովային մինիստրը։

Պաշտօնական արձանագրութեան համաձայն՝ բէյխտագի բիւջէտայի մասնաժողովի նիստում Տիրպիցը յայտնեց, թէ Անգլիայի հետ երկուստեք նաւատորմերի ուժերի փոխ-յարաբերութիւնների մասին բանակցութիւններ տեղի չեն ունենում և վաղուց էլ չեն եղել։ Անգլիան բնաւ պատրաստակամութիւն յայտնած չէ ձեռնարկելու այդօրինակ բանակցութիւնների։ Միանգամայն սխալ է, թէ իբր Գերմանիան երբևիցէ մերժել է այդ տեսակ առաջարկութիւն պաշտօնական համաձայնութիւն կապելու. հարկաւոր են ամենից առաջ երաշխաւորութիւններ։

—

Վիեննա.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ փետրվարի 3-ին և 4-ին կայացած խորհրդակցութիւնների ժամանակ տնտեսա-քաղաքական հարցերում աւստրիացի և ունգարացի մինիստրները եղել են բոլորովին համակարծիք։

—

Լօնդօն.—Րէյտէրին հեռագրում են Դէլիից, որ զօրամաս է ուղարկվում պատժելու Նագա շրջանի տեղացիներին հնդկա-անգլիական զինուորական ոստիկանութեան վրա յարձակում գործելուն համար։

—

Ուրգա.—Ռուսաց դեսպանի և մօնգօլ մինիստրների միջև ստորագրվեց պայմանագիր, որով հեծելազօրի վերակազմութեան համար մօնգօլական ծառայութեան մէջ հրաւիրվելու են ռուս օֆիցէրներ։

—

Կիօտո.—25,000 մարդուց բաղկացած ամբոխը քարուքանդ արեց Կացուրայի պաշտպանող խմբագրատները, փորձեց քանդել Կացուրայի կուսակցութեան պատգամաւորների տները, ջարդեց մի քանի ոստիկանական տնակներ։ Վիրաւորվեցին 90 հոգի։

ԱՐԴԱՐԻՆ ՊԱՀԱՆՋԸ

—

Բաբերդ, 28 յունուար

Փորձութեան ձորէն կուգայ ան, մահահրաւէր այն վայրէն, զոր Աստուած չըրաւ, բայց նա եղաւ. մարդոց չարութիւնը կերտեց զայն՝ նման դիցաբանական տարտարոսին, ուրանօր կատաղիք կը յարձակին անմեղ հոգիներու վրայ, անոնցմէ լուծելով իրենց մշտնջենիկ դատապարտութեան վրէժը։ Նախախնամութիւնն իսկ կը բողոքէ անոր գոյութեան դէմ, բայց ան չըհրկէր, չի կործանիր իր խարխուլ պարիսպներուն մէջ անգամ, այլ նորանոր Բաստիլներու կը փոխուի։ Բանտն է ան՝ Բաբերդի բանտը, նախագաւիթը մռայլ երկրին՝ Կարնոյ կեդր. բանտին, ուր կառաջնորդուին փորձութեան ձորին դժբաղդ փորձանաւորները։ Արդեօք ինչպէս Աստուած ստեղծեց անմեղութիւնը, երբ գիտէր անոր շուրջը դարանակալին յածումները, ինչպէս շինել մարդը, երբ կայէնեան ծնունդներ պիտի զոհէին աբէլեան կեանքեր։ Ինչով բացատրել այն անհոգութիւնը, անտեսութիւնը, որով արդարութիւնը կը տապալէ հալածանքի հարուածներուն ներքև, և դարերու բողոքներն անլսելի կը մնան չարութեան հեղինակներէն։

Բացատրենք մեր միտքը, և մարդկութեան դատին աշխատողները թող լսեն ու սարսռան։

Սեդրակ Մինասեան՝ ընկերական հարցերու վարժ ու զարգացեալ երիտասարդը՝ օր ցերեկով յարձակում կը կրէ մէկու մը կողմէն, որը պատրաստուած էր նախօրէն. արդարը իր իսկ յարկին ներքև դաւաճանին դաշոյնին առջև հալածական՝ 3 անգամ փախուստ կուտայ, շուրջ կը դառնայ բիլարդի սեղանին բոլորը, կաղաչէ՝ խելքի և դարձի բերելու համար չարին արբանեակը. բայց՝ ի զուր. դարանակալը անմեղութեան արիւնը կը պահանջէ անպայման։

Ներկաները, մեծ մասամբ զինուորական օֆիցէրներ, անճարակ կը մնան դաշոյնը խլել չարագործի ձեռքէն. ան նոյն իսկ օֆիցէրներուն կը սպառնայ և կը փախցնէ զանոնք։ Այս անգամ ճարահատ՝ իրաւունքը կը մնայ ինքնապաշտպանութեան, որ գետին կը փռէ ամբարտաւան և արեան ծարաւի վարձուած հրէշը. զինք վարձողները մինչև որ օգնութեան կը փութան, արդէն «մահն իր վրէժն առաւ հանգչեցաւ»։ Ցետոյ՝ Խուժանական զումարում և յարձակում. սարսափ հանրային, մահու սպառնալիք, թալանի ծարաւ, պաշտօնական մարմիններու տագնապ, և ապա ծովու հանդարտութիւն, երբ արդարը անձնատուր՝ կառաջնորդուի փորձութեան ձորը, բանտը, անարգանօք, կոծփի և այլն հարուածներով, և հոն կը գտնայ շղթայակապ մար- [illegible] -րոնք անոր շղթային շառաչիւնով կը պարեն, կը հեգնեն, հայհոյանքներով կը սպառնան սաղ չթողնել զինքը. զոկած են այցելութիւններէ և մայրենի բարբառէն։

Զորին դատաւորք աւարտած են իրենց քննութիւնները. և նախաքննութեան թղթերը սկսած են տալէս. «Մին դէյըր թէամմիւղ ...ի կամիլ իթմէսինիղէն դոլայի չինայէթլէ լիւզումը մուհաքէմէսինէ կարար վէրիլդի *)»։

Շղթայակապ մարդը վերջապէս գիշերայն առաջնորդուեցաւ Կարնոյ բանտը, զոր մենք կոչեցինք մռայլ երկիր, ուրկէ ան կը գրէ Բաբերդի պաշտօնեի մը.

«Գիշեր ատեն զիս ոստիկաններու պաշտպանութեան յանձնելով ճամբայ հանելը՝ պատահական յարձակումէ զիս փրկելու համար ըլլալը գիտնալով՝ շնորհապարտ եմ ձեզ։ Ճամբան՝ վիզս անցուած անուրին սարիքը բռնած է մի ժանդարմ։ Կոփի բարձրութեան և կողերուն վրայ ձիերու ոտքերուն տակ ճզմուող ձիւնին խղճալի հեծեծումը և ցուրտ քամին երեսս ի վեր որոտացող ձայնը՝ ականջներուս կըսեն՝ զուլում, զուլում. այդ ձայներուն խառնուած է նաև զանգակներուս ողբական ձայնը՝ ձեր կը տանին, ուր, մեր միակ պաշտպանը. ով Աստուած, դուն ալ անգութ ես, ինչպէս որ կը թողուս մեզ, միթէ անիրաւութիւն է անձնապաշտպանութիւնը»։

Իսկ փորձութեան ձորէն՝ Բաբերդի բանտէն հետևեալը կրցած էր հասցնել իր մէկ բարեկամին, նոյեմբեր 30 թուով.

«... Զգաստացի՛ր... ակնապիշ եղիր, որ չլինի թէ սահմանադրական կոչուած կառավարութիւնը արդարութեան և ինքնապաշտպանութեան սուրբ գործին դէմ անարդար վճիռ արձակէ. բացատրութիւն պահանջեցէք մեր ինտէլիգէնտ միւսիւման ընկերներէն թէ՝ ինչով ենք մենք մեղաւոր, ինչպէս պէտք է վարուիլ, ինչպէս պէտք է ապրիլ, ինչպէս պէտք է զարգացնել նո սերունդը, որ հասնինք ընդհանուր մարդկութեան բանակին, որը պատրաստ է և կը պատրաստուի քաղաքակրթութեան բաց մեզանից»։

Երկար պիտի ըլլար բառ առ բառ օրինակել իր ընկերաբանական գրութիւնը, բաւական կը համարիմ վերջին տողեր հնչեցնել մեր միւսիւլման զարգացած դասակարգին ականջներուն։

Մինչև երբ պիտի ապրինք այս անտանելի կեանքը, ուր չարութիւնը կը հալածէ, կը տապալէ իրաւունքը, արդարութիւնը, երբ պիտի խելօքնանք և միանանք մարդկութեան դատին շուրջ։

Մէնաէ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 17 յունվարի

Հայկական հարցի յուզումը Եւրոպայում, ինչպէս սպասվում էր, արդէն գրգռել է տեղիս իսլամական մտքերը, մանաւանդ իթթիհադականների կրկին անգամ պաշտօնի անցնելուց յետոյ, ուստի արտայայտութիւններ են լինում զանազան թիւրք և քիւրդ շրջաններում ընդդէմ հայերի, արտայայտութիւններ, որոնց արձագանքը հասնում է հայերիս և սէնսացիա ու տագնապներ առաջացնում։

Արճէշում կան հարիւրից աւելի առևտրական հայեր Վանից ու Բաղէշից, որոնք Ծննդեան տօները անց են կացել մեծ անհանգստութեան ու կասկածների մէջ, որովհետև նոյն տեղի զինուորական հրամանատար մի ոմն հաջի Զայիդ փաշա, որ մինչ ցարդ հայերի մասին լաւ վերաբերմունք է ունեցել, տարաձայնել է, որ հայերը զօրքեր են պատրաստել և ուրիշ ռազմական պատրաստութիւններ են ունեցել իսլամների վրա յարձակվելու. ուստի իսլամներն էլ գրգռվում են և գրգռիչ արտայայտութիւններ են անում ընդդէմ հայերի. իսկ հայերը կասկածելով փակվում են իրանց տներում. Նրանք դիմում են տեղի կայմակամին, որ նոյնպէս մի կասկածոտ պատասխան է տալիս. դիմում են Վանի [illegible] միջոցով Վանի վալիին. և այս բանից յայտնի է լինում, որ այս ամենը հետևանք է եղել... մի երազի. յիշեալ հաջի Զայիդ փաշան երազում տեսնում է, որ հայերը ռումբեր են պատրաստում և իսլամների վրա յարձակվում, որը նա համարելով մի աստուածային ներշնչութիւն՝ հեռագրում է իսկոյն Կ. Պօլիս, խօսում է թիւրք ու քիւրդ գլխաւորներին ու մեծ սէնսացիա է առաջ բերում. իսկ ամենից զարմանալին այն է, որ կենտրօնական կառավարութիւնը մի այսպիսի երազատեսի կարևորութիւն է տալիս ու հեռագրով հարցնում Վանի վալիից։ Ահա մի փաստ էլ, թէ մեզ կառավարողները ի՛նչ մտայնութեան և ի՛նչ ֆանատիկ զգացումների տէր են. տեղը չէ՞ արդեօք բանաստեղծի հետ կրկնելու՝ «Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի» խօսքերը։

Գուցէ այս երազատեսի աստուածային յայտնութեան ազդեցութեան ներքոյ, մի քանի օրից յետոյ էլ տեղիս թիւրք առևտրականները կանչում են մի հայ առևտրականի և նրան ասում են, որ «մենք ցարդ իրար հետ եղբօր պէս ապրում էինք, բայց սրանից յետոյ էլ եղբայրներ չենք և մի քանի օրից յետոյ էլ Արճէշն էլի սպանդանոց է դառնալու»։ Հայերը կրկին յուզվում ու հեռագրով բողոքում են տեղիս վալիին և առաջնորդին, իսկ վալին հրամայում է ձերբակալել տալ այդ սպառնալիքը անող թիւրքին, իսկ Արճէշի կայմակամը պատասխանել է, որ թիւրքը արբած վիճակի մէջ արել է այդպիսի լեզուագարութիւն։

Մի ուրիշ սէնսացիա Բաշ-կալէում, ուր միւթէսարրֆ է նստում. այստեղ էլ Մէհմէդ անունով մի զինուորական օֆիցէր, շէյխ Հասանի որդի Մահարի, յայտնի Շէրիֆբէկի և ուրիշ փաթթոցաւորների հետ, գաղտնի ժողովներ է գումարում Բաշ-կալէում ու յայտնի պրօպագանդա անում հայերի դէմ. երբ հարց է լինում նրանց գումարումների նպատակի մասին, ուրիշ պատճառներ են պատրուակում. բայց նրանց արտայայտութիւններից, շարժ ու ձևերից յայտնի է լինում, որ հայերի դէմ չար նպատակներ են տածում։

Նոյնիսկ քաղաքումս էլ սրանց նման արտայայտութիւններ լինում են, և բոլոր նշանները ցոյց են տալիս, որ հայերի դէմ կրքերը վերին աստիճանի լարված վիճակումն են, և թէ մի փոքրիկ կայծ բաւական է մի մեծ հրդեհ բռնկեցնելու համար։ Միայն մի բան է ուրախալի ու մխիթարական, որ վալի Իզզէթ-բէյը, որ քիւրդ է ծագումով, լաւ տրամադրութիւններով է օժտված և աշխատում է հայերի ու քիւրդերի մէջև եղած տարաձայնութիւնները վերացնել. թէև նա այդ անում է սիրաշահութեան ուղիով, փաղաքշելով, հիւրասիրելով քիւրդ ցեղապետներին, որը գուցէ աւելի քաջալերէ նրանց, որոնք անպատիժ մնալով կամ պատիժներից երկիւղ չունենալով՝ աւելի համարձակութիւն կը ստանան հայերին նեղելու և անհանգստութիւններ պատճառելու, էլ չենք ասում ջարդեր առաջ բերելու, որոնք առաջ չեն գալիս առանց կենտրօնական կառավարութեան հրամանի։

Մտրակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ «ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

—

Լ. Շանթի «Հին Աստվածները» ես կարդացել էի դեռ ներկայացումից առաջ և հիացած մնացել։ Ես պատրաստվում էի գրել իմ տպաւորութիւններս այս դրամայի մասին, բայց ուրիշ գործեր վրա գալով խանգարում էին, և այս միջոցում լոյս տեսան քննադատութիւններ մամուլի մէջ, Տ. Նազարեանի Գրական Սալօնում և ուրիշ տեղեր. և որովհետև շատ բան իմ ասելիքից արդէն ասվեց՝ ես այլ ևս աւելորդ համարեցի հանդէս գալ։ Սակայն այսօր աւելորդ չեմ գտնում մի քանի տող գրել բացատրելու համար մի երկու կարևոր կէտ, որոնք մինչև այսօր աչքաթող են արված, որի պատճառով տուժում է դրամայի ճիշդ լուսաբանութիւնը (աչքի առաջ ունեմ փետրվարի 3-ի գրական դատը և դատարանի վճիռը)։

Նախ և առաջ՝ իբրև իրականութիւն ընդունված է (և ոչ ոքից հերքված չէ), իբր թէ «Հին Աստվածները» պատմական հիմք չունի, բացի մի քանի յատուկ անուններից, և որ ամբողջ ֆաբուլան ստեղծված է հեղինակից՝ իբր որոշ մտքերը նրա միջոցով արտայայտելու համար։ Սակայն այսպէս չէ։ «Հին Աստվածների» մէջ երկու առանձին ֆաբուլա կայ, որոնք զարգանում են ինքնուրոյն կերպով և կապվում են իրար հետ՝ վանահօր և աբեղայի անձնաւորութիւններով *)։ Ֆաբուլաներից մէկն է վանքի և եկեղեցու կառուցումը վանահօր և իշխանուհու միջոցով և այս երկուսի մէջ եղած յարաբերութիւնը։ Երկրորդ ֆաբուլայի առարկան է երիտասարդ աբեղան իր սիրով դէպի Սեդան, որին փրկել է ծովահեղձ լինելուց։

Արդ՝ առաջին ֆաբուլան զուտ պատմական հիմք ունի. նրա մէջ հեղինակը իր կողմից (այն էլ ոչ առանց հաւանականութեան) աւելացրել է երկուսի երբեմնի փոխադարձ սէրը։ Հետաքրքրվողները կարող են այս մասին լիակատար տեղեկութիւններ գտնել Ալիշանի «Սիսական» աշխատութեան (եր. 78—84) և այնտեղ ցոյց տրված աղբիւրների մէջ։ Ես այստեղ կը բերեմ մի քանի քաղվածներ, որոնք իբրև պատմական հիմք կարող են ճանաչվել «Հին Աստվածների» մի մասի համար։

Մաշտոց անունով մի անձ (դրամայի մէջ կոչված Յոհաննէս) երիտասարդական հասակում հետամուտ լինելով սրբազան խոհերի և աղօթքի՝ գալիս բնակվում է Սևան կղզում, կամենալով մարդկանցից զատվել, առանձնանալ և նվիրվել Աստուծուն։ Այս բանը տեղի է ունենում 871—2 թվականին։ Սիւնեաց Վասակ իշխանի կինը, Մարիամ, որ Աշոտ Ա. Թագավորի դուստրն էր և վաղ այրիացած, լսելով նրա հռչակը՝ նրան թախանձում է Սևանում միաբանութիւն կազմակերպել։ Երկար դիմադրելուց յետոյ Մաշտոցը համաձայնում է. շինում են երկու եկեղեցի, մէկը ս. Առաքելոց անունով և միւսը Մարիամ Աստվածածնի անունով։ Շինութիւնը կատարվում է 874 թվականին։ Մաշտոցը ժողովում է միաբանութիւն, մշակում է առաքինական խիստ կարգեր, ինքը անձամբ օրինակ է տալիս ժուժկալութեան. նա մինչև անգամ հրաժարվում էր մրգեղէնից և ջրից։ Նա շարունակ զբաղված էր Ս. Գրքի ընթերցանութեամբ և միւսներին էլ նոյնն էր խրատում։ Նա սուտ-վանականներից, նաև դրսի նշանավոր մարդկանցից նեղութիւններ էր հանդիպում, բայց տանում է համբերութեամբ։ Նա հեզ էր, գեղեցիկ կերպարանքով, վայելչակազմ, առատամիտ, մեծերի ներկայութեամբ զօրաւոր և անհարկու։

Մարիամ իշխանուհու հայրը (դրամայի մէջ՝ եղբայրը) 883 թվին Սևանի մօտ ծովեզերքին երբ բանակ էր դրել՝ ցանկանում է տեսնել հռչակված վանահօրը. վանահայրը գալիս է թագավորի տեսութեան (դրամայի մէջ՝ իշխանը ինքն է գնում վանքը, որի ժամանակ և Սեդան լաստից ծովն է ընկնում)։ Բարեպաշտ իշխանը վանքին շատ նվէրներ է տալիս, որոնց թվում Ցամաքաբերդը և այլ գիւղեր և այգիներ։

Գէորգ Բ. կաթողիկոսից յետոյ, 897 թվին, Սմբատ թագավորը և ազգայինները Մաշտոցին բարձրացնում են կաթողիկոսական աթոռը, որը նա գրավում է հազիվ եօթը ամիս, վախճանվելով 66—70 տարեկան հասակում։ Նրան յաջորդում է Յովհաննէս Ձ. կաթողիկոսը։ Սրանից երևում է, որ եկեղեցու շինութեան ժամանակ Մաշտոցը եղել է 45—47 տարեկան (դրամայի մէջ՝ «գրեթէ ծերունի»)։

Սևան կղզու մասին յիշատակվում է և այս աւանդութիւնը («Սիսական», եր. 78), թէ պատմական ժամանակի սկիզբներից ի վեր կղզին նվիրված է եղել աստվածեղէն զօրութեան, կուռք կամ բագին կանգնեցնելով, կամ հէնց ծովի մէջ բուսած հէնց այդ բարձրադիր կղզին սրբագործված էր, իբրև դիւցական։ Այսպէս շարունակ ճանաչվել է կղզին՝ մինչև ս. Գր. Լուսաւորիչը, որ հեթանոսական պաշտամունքի փոխարէն քրիստոնէական պաշտամունք է մտցրել, հիմնելով լեռան գագաթի վրա մի փոքրիկ եկեղեցի ս. Յարութեան անունով։

Այս քաղվածքից երևում է, որ պատմութեամբ և աւանդութեամբ արդարանում են դրամայի մէջ հետևեալ կէտերը. որ Սևան կղզին համարվելիս է եղել հին աստվածների բնակարան. որ մօտ 1000 տարի առաջ այդտեղ հիմնվել է վանք և եկեղեցի յանուն Մարիամ Աստվածածնի. որ այդ եկեղեցին շինվել է Մարիամ իշխանուհու թելադրութեամբ, նրա և վանահօր ձեռքով. որ իշխանուհին վաղ այրիացած է եղել և երկար թախանձել է վանահօր այդ շինութեանը ձեռնարկելու. որ վանահայրը եղել է 45—47 տարեկան, վայելչակազմ, գեղեցիկ, ազդեցիկ անձնաւորութիւն. (այս հանգամանքներից ամենայն իրավամբ կարող էր հեղինակը դուրս բերել իշխանուհու կողմից թաքնված սէր դէպի վանահայրը). որ վանահայրը եղել է բարձր բարոյականի տէր, մարդկանցից խուսափող, դէպի երկնայինը ձգտող. որ նա նեղութիւններ է հանդիպել սուտ վանականների և հզօր դրսեցիների կողմից (=նրա գժտվելը վանականների և իշխանուհու հետ). որ Սևան է եկել, վանահօր հետ տեսակցել է և վանքին նվէրներ տվել իշխանուհու հայրը (դրամայի մէջ եղբայրը)։

Ես ձեռքի տակ չունեմ հ. Ալիշանի յիշած աղբիւրները, որոնք գուցէ ուրիշ մանրամասնութիւններ էլ պարունակէին մեզ հետաքրքրող հարցի նկատմամբ. բայց այսքանն էլ կարծեմ բաւական է ցոյց տալու, որ «Հին Աստվածների» մէջ առաջին ֆաբուլան (վանահայր, իշխանուհի) միանգամայն պատմական է, նոյնիսկ երկրորդական պարագաներում. և ոչ միայն այս. վանահօր տիպն էլ բոլորովին համապատասխան է պատմական Մաշտոց վանահօր (ապա կաթողիկոս) նկարագրին։

Ես կանգ չեմ առնում միւս վանականների վրա. նրանք, իբրև միջնադարեան կրօնավորներ՝ վերին աստիճանի տիպական են, բնական ու կենդանի, նոյնիսկ կոյր աբեղան, որ աշխարհի հրապոյրները չը տեսնելու համար աչքերը հանում է։ Սրանց օրինակները հարիւրներով կարելի է գտնել միջնադարեան և աւելի հին դարերի կրօնավորների մէջ, իրանց բնորոշ գծերով. «Հարանց վարքը» լիքն է այսպիսի կրօնավորների նկարագիրներով։

Իմ երկրորդ ասելիքը վերաբերում է աբեղային։ Արդեօք Լ. Շանթը ունեցել է ի նկատի որևէ յատուկ անցք կամ Սևանում կամ ուրիշ տեղ պատահած, որից առնելով աբեղայի արկածի պատմութիւնը, ինձ յայտնի չէ։ Բայց որ մի երիտասարդ աբեղայ սիրահարվում է մի աղջկան, դա այնքան բնական և ընդհանրական երևոյթ է, որ դրա համար առանձին պատմական անցք փնտռելն էլ աւելորդ է։ Կեանքը լի է այսպիսի փաստերով։ Հետաքրքրականը՝ այդ սիրոյ զարգացումը և վախճանն է դրամայի մէջ, որի վրա մինչև այսօր, որքան ինձ յայտնի է, ուշադրութիւն դարձված չէ։

Բանն այն է, որ աբեղան, իբրև նորմալ անձն, մեզ յայտնի չէ. հեղինակը մեզ չէ տվել որևէ տիպ առողջ անձնաւորութեան, որին կարելի լինէր քննել հասարակական այս կամ այն տեսակէտից, համարել դրական կամ բացասական տիպ։ Դրամայի մէջ հանդէս է բերված մի հոգեկան հիվանդ, մի տիպիկական մելամաղձիկ (меланхоликъ), այս հիվանդութեան բոլոր էական գծերով և նրան յատուկ ընթացքով ու վախճանով (անձնասպանութիւն)։ Երիտասարդ աբեղան դժբաղդութիւն է ունենում՝ լաստով Սևան կղզին փոխադրելու իշխանին և նրա մատաղահաս աղջկան, Սեդային (լաստն եւ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՄԱՆՈՎՆԵՐԻ ՏԱՆ 300-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆՄԱՆ ԿԱՐԳԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 5 փետրվարի

Հրատարակվեց Ռոմանովների Տան 300-ամեայ Թագաւորութեան հանդիսաւոր տօնակատարութեան կարգը՝ հաստատված Թագաւոր Կայսրից, որի համաձայն փետրվարի 21-ին պետութեան բոլոր եկեղեցիներում և տաճարներում կատարվելու են հանդիսաւոր պատարագ ու գոհաբանական մաղթանք. պատարագը աւարտվելուց յետոյ կարդացվելու է Բարձրագոյն հրովարտակը։

Պատարագի սկզբին զինուորական տաճարները կը գան քաղաքային եկեղեցիներից եկեղեցական թափօրները։ Գիւղերում ևս կը կատարվեն եկեղեցական թափօրներ։

Պատարագից ու մաղթանքից յետոյ եկեղեցիների և տաճարների զանգերը ղօղանջելու են ամբողջ օրը. բոլոր զօրամասերում տեղի են ունենալու զօրահանդէսներ։

Փետրվարի 21-ին առաւօտեան ժամը 8-ին Պետերբուրգի բերդից թնդանօթի պարպումը կազդարարէ, թէ կատարվելու է Ռոմանովների Տան Թագաւորութեան հանդիսաւոր տօնը։

Կազանի տաճարում պատարագը մատուցանելու է Պետերբուրգի և Լադոժայի միտրոպոլիտը։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհիները, Գահաժառանգ Արքայորդին և Մեծ Իշխանները կը բարեհաճեն դուրս գալ Ձմերային Պալատից և գնալ Կազանի տաճարը։ Ամբողջ ճանապարհին կանգնած են լինելու մինչև տաճարը կրթական հաստատութիւնների սաներ-սանուհիները և զօրքերը։ Պատարագից յետոյ Նոցին Մեծութիւնները կը հաճեն վերադառնալ Ձմերային Պալատ։

Փետրվարի 21-ին, 22-ին և 23-ին Ձմերային Պալատում Նոցին Մեծութիւնները կընդունեն շնորհաւորողներին։ Փետրվարի 23-ին Թագաւոր Կայսրը Ձմերային Պալատում կընդունէ շրջանային տանուտէրերին և շինական ազգաբնակութեան միւս ներկայացուցիչներին, որից յետոյ նրանց ճաշ կը տրվի Բարձրագոյն պալատի կողմից։ Փետրվարի 22-ին Մարիինսկի թատրոնում տեղի կունենայ Պալատի կողմից հրաւիրված երկսեռ հիւրերի համար պաշտօնական ներկայացում։ Փետրվարի 21-ին մայրաքաղաքում կը լինեն ժողովրդական զբօսանքներ։ Փետրվարի 24-ին Ձմերային Պալատում կը լինի պաշտօնական ճաշ Պալատի կողմից հրաւիրված անձանց կանանց համար։

ԹԱՒՐԻԶԻ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ ԲԱԳՈՒՈՒ

—

Բագու, 3 փետրվարի

Ինչպէս յայտնի է, ամսիս 19-ին լրանում է Թաւրիզի Արամեան դպրոցի 60-ամեակը։ Յայտնի է և այն, որ այդ դպրոցը 60 երկար տարիների ընթացքում Պարսկաստանի նման մի խաւար մթնոլորտում ահագին դեր է կատարել հայ ազգաբնակութեան շրջանում, սովորեցրել, ծանօթացրել է հազարաւոր պարսկահայերին մայրենի լեզուի, գրականութեան ու ազգի անցեալի հետ, մտցրել է կուլտուրա, որի կարիքը պարսկահայերի շրջանում խիստ զգալի է մանաւանդ կէս դար առաջ։

Այդ առթիւ մի շարք լրագրական հրաւէրներով յիշեցրին տեղիս հայ հասարակութեան և խնդրեցին ներկայ գտնվել այսօր խորհրդակցութեան, որի համար նշանակված էր Բ. Հ. Մարդ. Ընկ. խորհրդարանը ցերեկ ժամը 1-ին, պատարագից յետոյ։

Խորհրդարանի դահլիճը փայլում էր իր դատարկութեամբ. ամբողջ Բագուից, այդ մի քանի տասնեակ հազարաւոր բնակչութիւնից ներկայ էին... 7 հոգի, որոնցից երկուսը թղթակիցներ—«Մշակի» և «Каспій»-ի,—և երեք հոգի պարսկաստանցի (Թումանեանցներ իրանց կառավարչով) և 2 հոգի էլ ռուսահայեր (Հ. Բ. Տէր-Միքայէլեան և Ա. Ն. Դաստակեան)։

Խորհրդակցութիւնը շատ սառը բնոյթ ունէր. կարծես նոյնիսկ ներկայ եղողները չէին էլ ուզում խօսել. իրար երեսի նայելով սպասողական դրութեան մէջ էին, կարծելով որ 60—70 հազար բագուաբնակ հայերից մի քանի տասնեակ հոգիներ կը գան. եթէ հասարակութիւնն էլ անտարբեր գտնվէ, գոնէ տեղիս ուսումնարանի հոգաբարձուներից, Կուլտուրական Միութեան զանազան սեկցիաների անդամներից, Մարդասիրական Ընկ. վարչութեան անդամներից հետաքրքրվողներ կը լինեն։ Բայց երբ համոզվեցին, որ իրանցից բացի ոչ ոք խորհրդարանի դուռը չէ բացում, Ա. Դաստակեանը հարցրեց Թումանեան Վաղինից.

---

*) Առանց կանխամտածութեան ...ը սպանուած ըլլալուն համար իբր եղեռնագործ դատուելու որոշում տրուեցաւ։

*) Համեմատեցէք Չէխովի «Լիր Թագավորի» հետ, որտեղ նոյնպէս երկու ինքնուրոյն ֆաբուլա կայ, Լիրը իր աղջիկներով և Գլօստէրը իր որդիներով։

— Դպրոցը որոշ չափով ապահովութիւն ունի՞։

Պատասխանից պարզվեց, որ ունեցել է բաւականաչափ ֆօնդ, բայց զանազան անձանց մօտ գտնվելով դրամը հալվել է, և ներկայումս մնում է 10,000 րուբլու չափ գումար, որը շատ աննշան է։

Խորհրդակցողներից մի քանիսը նկատողութիւն արին Վ. Թումանեանին, որ ի զուր են դպրոցի փողը ուրիշ անձանց ձեռքը տուել, մինչդեռ, եթէ միայն Թումանեան առևտրական տան մէջ, ապահով կը լինէր և ջուր չէր դառնայ։

Թումանեանը ցանկութիւն յայտնեց, որ եթէ 60-ամեակի յոբելեանով կարելի լինի 10,000 ր. նուիրաբերել, դպրոցը ապահով կը լինի։

Կարծիք յայտնեցին, որ դիմեն հանգանակութեան նուիրատուութիւն ժողովելու. սկզբում այդ անյարմար նկատվեց, ի նկատի ունենալով որ ներկայումս հանգանակվում է նորակառոյց եկեղեցու կիսատը աւարտելու համար և արդէն ժողովվել է 18,000 րուբլի։ Հ. Բ. Տէր-Միքայէլեան շատ իրաւացի կերպով յայտնեց, որ աւելի նպատակայարմար է դիմել այն առևտրականներին, որոնք իրանց գործերով կապված են Պարսկաստանի հետ և որոնց թէ միջոցները և թէ թիւը քիչ չէ Բագւում։

Խօսվեց և ուղերձների մասին. ցանկութիւն յայտնեցին երկու ուղերձ պատրաստել—մէկը ռուսահայ բագուաբնակ հայերից, միւսը պարսկահայ բագուաբնակներից։

Խորհրդակցողները որոշեցին 4 հոգուց մի յանձնախումբ ընտրել, որպէսզի դրանք մասնաւոր խորհրդակցութեամբ մշակեն որոշ ծրագիր՝ նպաստելու դպրոցի ֆօնդին։

Ընտրվածների մէջ են տիկ. Պերճ Ան. Թումանեանց, Հ. Բ. Տէր-Միքայէլեան, Ա. Դաստակեան և մեզ անյայտ մի պարոն։

Խորհրդակցողները ցրվեցին ժամը 3-ին։

Պէտք է նկատել, որ ռուսահայ բագուաբնակները շատ անտարբեր վերաբերվեցին պարսկահայերի միակ և առաջին կուլտուրական հիմնարկութեան տօնակատարութեանը։ Գոնէ մի քանի տասնեակ հոգիներ չեկան խորհրդակցութեան ներկայ լինելու, ուր ոչ մի նուիրաբերութիւն, ստորագրութիւն կամ հանգանակութիւն տեղի չէր ունենալու։ Մինչդեռ Բագուի հայ հասարակութեան բոլոր կուլտուրական, հասարակական գործերին, ժողովներին և նուիրաբերութիւններին բագուաբնակ պարսկահայերը ամեն անգամ մասնակցել են, մանաւանդ եղբ. Թումանեանները, որոնք ռուսահայերի մէջ անգամ եթէ ոչ առաջին, գոնէ երկրորդ տեղն են բռնել։

Աւելի դատապարտելի է բագուաբնակ պարսկահայերի անտարբերութիւնը, որոնց թիւը քիչ չէ Բագւում։

Ռուսահայերը, մանաւանդ Պարսկաստանի հետ հարևան և առևտրական կապեր ունեցող հայերը, պիտի լաւ իմանան, որ Պարսկաստանի նման մի երկրի հայերը, որոնց 95 տոկոսը համշարինների հետ հաւասար դասակարգ են կազմում իրանց տնտեսական սուղ դրութեամբ, մեծ կարիք ունեն մեր աջակցութեանը՝ իրանց կուլտուրական զարգացման գործը առաջ տանելու խնդրում։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կոմսուհի Ելիզավետա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկօվան Թօքախտի դէմ մաքառող կովկասեան ընկերութեան վարչութեանը ուղարկեց Էջմիածնի սինօդից ստացված 208 ր. 64 կ. գումարը, որ հայ-լուսաւորչական եկեղեցիներում հանգանակվեց յօգուտ Աբաս Թումանում Թօքախտաւորների սանատօրիա հիմնելու։

◆ Քաղաքային վարչութիւնը Ռոմանօվների Տան յոբելեանի առիթով պատմական պատկերներ ցոյց տալու համար—մոգական պատկերներով—յատկացրել է 300 րուբլի։ Պատկերները ցոյց կը տրվեն ընթերցանութիւնների ժամանակ Ժողովրդական Տանը և քաղաքային տարրական դպրոցներում։

◆ Երէկ առաւօտեան Պետերբուրգ մեկնեց ծառայութեան գործերով Կովկասի փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլօվը։

◆ Երէկ Թիֆլիս եկաւ և ստանձնեց իր պաշտօնականութիւնները երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօր ի. պ. խ. Կ. Շաշկօվսկին։

◆ Թիֆլիսում բարձր կրթական հաստատութիւն կառուցանելու գլխաւոր կոմիտէտի գործավար, հրաժարված Բէզօբրազօվի փոխարէն, նշանակվեց իշխան Գ. Թումանեանը։

◆ Այսօր, ինչպէս յայտնի է, հողին է յանձնվում հասարակական գործիչ՝ բժ. Աղ. Ղազազեանի մարմինը։ Թէ հանգուցեալի և թէ նրա ընտանիքի կամքն է եղել պսակ չը դնել դագաղի վրա։ Այդ խիստ գովելի և օրինակելի որոշումը առիթ է տուել հանգուցեալի յարգողներից շատերին պսակի համար ծախսվելիք իրանց դրամները յատկացնել կրթական և կուլտուրական հիմնարկութիւններին։

◆ Ստացանք հանգուցեալ բժ. Աղ. Ղազազեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն եղբ. Տէր-Մարգարեաններից 75 րուբլի, որից 50 րուբլի «Լոյս» Ընկերութեան յանձնելու համար, իսկ մնացորդ 25 րուբլին Հայ Ուսուցչական ֆօնդին յատկացնելու համար։ Ստացանք նոյնպէս պսակի փոխարէն՝ յանձնելու Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութեան՝ 1) Հռիփսիմէ և Յակոբ Վարդանեաններից 25 րուբ., 2) Եղբ. Յ., Ե. և Ս. Բաղդասարեաններից 25 րուբ.։

◆ Կովկասի փոխարքան հաստատեց Բագուի քաղաքագլխի պաշտօնում ընտրված Բըչին առաջիկայ քառամեակի համար։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը շնորհակալութեամբ ստացել է տիկին Վարվառէ Վասիլեւնա Թամամշեանից ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու և որդու 700 ր., որից 200 ր. յօգուտ Ընկ. դպրոցական-ուսուցչական ֆօնդի, իսկ 500 ր. յօգուտ Ընկերութեան ընդհանուր կարիքների։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ կիրակի երեկոյեան, ամսիս 10-ին, Հայ Գրողների Ընկ. մէջ Լէօն պատմական հայեացք կը ձգի հայերի ու քիւրդերի և նրանց յարաբերութիւնների վրա։

◆ Գանձակից հեռախօսով յայտնում են, «Յ.»-ին, որ փետրվարի 5-ին տեղական գիմնազիայի 5-րդ դասատան աշակերտ Տէր-Գէորգեանը ինքնասպանութիւն գործելու դիտաւորութեամբ կրակեց ատրճանակից և վիրաւորեց իրան ձեռքից։ Պատճառը պատանին հրաժարվում է յայտնել։

◆ Կարսից մեզ գրում են, որ Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղը, հանգուցեալ բժ. Աղ. Ղազազեանի յիշատակը յարգելու համար, որ Ընկերութեան յիշեալ ճիւղի հիմնադիրն ու նախագահն է եղել երկար տարիներ, որոշել է մի թոշակաւոր ունենալ հանգուցեալի անունով՝ տեղական հայոց ծխ. ուսումնարանում։ Բացի դրանից՝ հանգուցեալի այրին ուղարկել է 600 ր. նոյն Ընկեր. Կարսի ճիւղին, որպէս անձեռնմխելի գումար, որի տոկոսները յատկացվելու են հանգուցեալի անունով թոշակաւոր ունենալու համար։

ԼԸԺԻՆԻ ԳՈՐԾԻ ԱՌԻԹՈՎ

◆ «Р. Сл.»-ն յայտնում է, որ նախկին քննիչ Լըժինը ներկայումս գտնվում է Պետերբուրգում։ Նա դեռ ոչ մի անգամ չէ հարցաքննվել դատական քննիչից։ Յունվարի 30-ին քննիչ Ալէքսանդրօվը մեկնել է Մոսկվա Լըժինի գործի վկաներին հարցաքննելու համար։

◆ «Р. В.»-ում կարդում ենք. «Յունվարի 31-ին կարևորագոյն գործերի քննիչ Ալէքսանդրօվի առանձնասենեակում բժշկական քննութեան ենթարկվեց քննիչ Լըժինը առանձին մասնաժողովի միջոցով, որի մէջ կային զինուորա-բժշկական ճեմարանի պրիվատ-դօցենտ Օստանկօվ, հոգեբոյժ Չեխօվ, քննիչ Ալէքսանդրօվ և դատախազի օգնականը։ Լըժինին քննելը տևեց մօտ 8 ժամ անընդհատ, որովհետև այդ մասնաժողովի եզրակացութիւնից է կախված Լըժինի դէմ դատ բանալը։ Բժիշկ-մասնագէտները պէտք է վճռէին այն հարցը, թէ յիրաւի Լըժինը աննօրմալ է, թէ միայն հիւանդ է և ոչ բնաւ աննօրմալ։ Քննութեան առաջին քայլերից պարզ էր, որ Լըժինը բոլորովին առողջ մարդ չէ, ի նկատի առած որ նրա ջղային դրութիւնը երբեմն հակվում էր ոգելից խմիչքների։ Այդ հողի վրա նա յաճախ ընկնում էր հալիւցինացիայի մէջ, ուրին հետևում էր հալածվելու վախ, որ առանձնապէս սաստկանում էր իր կեանքի համար երկիւղ կրելու ազդեցութիւնից «Դաշնակցութեան» գործի քննութիւնից յետոյ։ Քննիչ մասնաժողովը հիւանդին քննելուց և բոլոր նիւթը նայելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ նա տառապում էր չափազանց ուժեղ տեսակի նեարդային քայքայումով, սակայն կարող էր ունենալ բաւականին կամք ու գիտակցութիւն իր գործերի մասին։ Մասնաժողովի եզրափակութիւնը ներկայացված է արդարադատութեան մինիստրի հայեցողութեանը, իսկ յետոյ կը քննվի սենատի միացեալ ատեանում»։

◆ Մայրաքաղաքի թերթերից մի քանիսը տեղեկացնում են, որ առաջիկայ ամնիստիան իբր Լըժինին չէ վերաբերելու։ Իսկ մի քանի թերթ, ընդհակառակն, ասում են, թէ ի նկատի առած Լըժինի մատուցած ծառայութիւնները, նրան արձակել են պաշտօնից՝ նշանակելով կենսաթոշակ, չը նայած որ նա ծառայել է ընդամենը 11 տարի։

◆ Մայրաքաղաքի լրագիրներից մի քանիսը հարց են բարձրացնում, թէ անհրաժեշտ է վերաքննել «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործը, որովհետև երկիւղ կայ, թէ այդ գործի առիթով Լըժինի կատարած խարդախութիւնների պատճառով շատերը դատապարտվեցին անպարտ տեղը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ*)

III

Պրօֆ. Սեռովբեանի ճառը

Այս երեկոյ ես ինքզինքս անակնկալի մը առջև կը գտնեմ, յանկարծ հրաւիրուելով խօսիլ ներկայ ազգային կացութեան մասին։

Հոս քիչ մը առաջ լսուեցաւ, թէ Հայաստանի հայ բնակչութեան թիւին խնդիրը մեծ կարևորութիւն չունի ներկայի դիւանագիտական պահանջներուն հետ։ Ներեցէք, որ ըսեմ, թէ Թիւրք մտայնութեան հետ մօտէն ծանօթութիւն ունեցողները չեն կրնար երբէք այդպէս մտածել։ Իմ ճանբորդութեանս միջոցին ես Պոլսոյ մէջ հանդիպեցայ թիւրքերէն յօդուածի մը, որուն մէջ Դիարբէքիրի Թիւրք երեսփոխանը կը յայտարարէր. «Դիարբէքիրի վիլայէթին մէջ հայեր գոյութիւն չունին գրեթէ, հետևաբար աւելորդ է խօսիլ բարեկարգութիւններու մասին. քանի որ հոն հայ չկայ, մենք բարեկարգութիւն չենք ուզեր մեր վիլայէթին համար»։ Եւ ահա այս իսկ պատճառով է, որ Թիւրք կառավարութիւնը միշտ ջանացած է հայերուն թիւը նուազ ցոյց տալ, ամեն անգամ որ հայկական բարենորոգումներու հարցը Եւրոպայի ուշադրութեան առարկայ է եղած։

Ցաւալի է, որ բնակչութեան թուական համեմատութիւնները խանգարելու համար էր, որ կազմակերպուեցան Հայաստանի սիստեմատիկ ջարդերը, և միւս կողմէն հայկական արտագաղթը, առթուած՝ տնտեսական և քաղաքական տառապանքներէ, մեծապէս նպաստեց Թիւրքիոյ հայահալած քաղաքականութեան։ Ես բազմաթիւ հայ գաղթականութիւններ տեսայ Ամերիկա, Անգլիա, Պարիզ, Եգիպտոս։ Պէտք է ընդունիլ, թէ գաղթականութիւնը հայութեան գերեզմանն է։ Եւ հայ ազգը, եթէ մնասուած է ջարդերէն, մնասուած է և գաղթերէն։

Մխիթարական է տեսնել, որ գաղթական հայերը հոգեկան խորունկ ըղձանքը ունին դէպի իրենց հայրենիքը վերադառնալու, եթէ զգալի փոփոխութիւն մը տեսնուի երկրին ներքին քաղաքային կեանքին մէջ։ Թիւրքիոյ սահմանադրութիւնը երբ հռչակուեցաւ, բազմաթիւ հայեր անմիջապէս դարձան դէպի հայրենիք, բայց հոն, սահմանադրութեան անունով երկրին հրամցուած այդ քաղաքային կատակերգութենէն յուսահատ, տարիներու ընթացքին օտարութեան մէջ արիւն-քրտինքով ձեռք բերած քիչ մը դրամական ուժն ալ ունայն սպառելէ վերջ, նորէն պանդխտութեան ցուպը ձեռք առին, անիծելով սահմանադրութիւնն ալ, երկիրն ալ, որ զիրենք խորթ մօր մը պէս հիւրընկալած էր։

Հակառակ կրուած յուսախաբութեանը, հայ գաղթականը տակաւին պատրաստ կը մնայ օտարութեան մէջ, և դեռ մարած չէ՝ իր հոգիին խորը՝ հայրենի օջախին կայծը, պատրաստ՝ վերադառնալու երկիր, երբ պզտիկ վստահութիւններ ներշնչուին իրեն իր կեանքի ու պատուոյ ապահովութեանը համար։ Եւ այդ ապահովութիւնը ան կը սպասէ պետութիւններէն, վստահ գիտնալով թէ Թիւրքիոյ հոգեբանութեան մէջ գոյութիւն ունեցող վատթարութիւնը առանձինն այդ ապահովութիւնը պիտի չկրնայ ներշնչել իրեն։

Երբ բալկանեան պատերազմը սկսաւ, Ռոշֆոր երեւան եկաւ «La Patrie»-ին մէջ կարգ մը յօդուածներով, ուր ծերունի մարդասէրը հայկական հարցի վերաբերմամբ եւրոպական պետութեանց ունեցած պոռնիկ դիւանագիտութիւնը պարզելէ վերջ՝ կը յայտարարէր, թէ բալկանեան դաշնակից պետութիւններուն կը վիճակէր եւրոպական քաղաքակրթութեան մէջ տեսնուած այդ աղտը սրբելու և իրենց զէնքին ոյժով հայկական հարցն ալ լուծելու գործը։ Այս յօդուածներէն ներշնչուած՝ ապահովաբար, Եգիպտոսի հայերը կը դիմեն նաև բալկանեան դաշնակից պետութեանց, իբրև իրենց երէկի չարչարակից ու այսօրուան ազատագրուած եղբայրներուն, որոնք ձեռք ձեռքի տուած երէկուան իրենց բռնաւորին դէմ կը կռուէին, արդարութեան գերագոյն գործին և մորթոտուած եղբայրներու ձերբազատումին համար։ Այդ հեռագրական դիմումները անպատասխան չմնացին։ Բուլղարիա չէր կրնար անտարբեր մնալ այս պահուս հայկական դիմումի մը առջև, երբ անդին բազմաթիւ հայեր իրենց նոր հայրենիքին մեծութեանը համար բացարձակ անձնուիրութեան ապացոյցները կուտային կռուի դաշտին մէջ։ Եւ անոնցմէ մին իր հեռագիր-պատասխանով կը յայտնէր, թէ հրահանգ տուած է իր Լօնդոնի դեսպանին, որպէս զի աշխատի գրասեղանի վրայ դնել տալու հայկական հարցը։

Հայկական հարցը 30—35 տարիներէ ի վեր զանազան փուլերէ անցաւ, դժբաղդաբար առանց նպաստաւոր արդիւնքի։ Եւ պէտք է խոստովանիլ, թէ մենք ու հայերու բարեկամները իրենց կողմէն ոչ նուազ սխալ ուղղութիւններու հետևեցանք։

1878-ի Սան-Ստեֆանոյի դաշնագրով, երբ ռուսական պետութիւնը որոշ և վճռական պայմաններու տակ Հայաստանի բարենորոգումներու խնդիրը կը վճռէր, անդին Ջէյմս Բրայս, պետական մարդ մը, անշուշտ տարուած իր կառավարութեան քաղաքական հայեացքներէն, կը գրէր թէ՝ «Հայերը չեն կրնար ռուսներուն բարեկամ ըլլալ»։ Անշուշտ այս հաւաստումը հիմք չունէր հայ սրտերու խորը, բայց դժբաղդաբար երկու ախոյեան պետութիւններու մրցակցութեան մէջ՝ այդ կարծիքը իր որոշ դերը ունեցաւ, այդ ոգիէն վարուեցաւ Բերլինի վեհաժողովը, որ հայութեան գերեզմանը եղաւ։

Ներկայիս հայկական հարցն իր վերջնական փուլին մէջն է. անիկա սկսած է մօտենալ իր ճակատագրական վախճանին։ Այդ փուլին առեղծուածը եղած են երկու պարագաներ. մէկը՝ մեր ռուսասէր ուղղութիւնն էր, ու միւսը՝ անգլօ-ռուսական մերձեցումը։ 1878, 1881, 1884 և 1895 թուականներուն գոյութիւն ունեցող մրցակցութիւնները Ռուսիոյ և Անգլիոյ միջև գոյութիւն չունին այսօր։ Եւ համոզիչ իրողութիւններ ու վկայութիւններ կան մէջտեղ, որոնք զմեզ կը վստահեցնեն, թէ երբէք անգլիական չկամութիւն մը պիտի չխանգարէ ռուսական ոևէ ծրագիր, որ կազմուած ըլլայ Փոքր Ասիոյ վերաբերմամբ։ Եւ այս բաղդորոշ վայրկեաններուն, հայկական հարցին նպաստաւոր լուծման մեր յոյսերը այդ երկու իրողութիւններու վրայ են հաստատուած։

Ձեզ կրնամ վստահեցնել, թէ բոլոր հայ գաղութներու, և նոյն իսկ բոլոր կուսակցութիւններու մէջ որոշ տրամադրութիւնը կայ, ազգային պատգամաւորութեան միջոցով, եւրոպական պետութեանց ներկայացնել ազգային մէկ կամք և ազգային մէկ ծրագիր։ Այս ուղղութեան հակառակող ոևէ գործ, ոևէ ծրագիր՝ ահագին պատասխանատուութիւն պիտի հրաւիրէ իր վրայ։

Հայկական հարցին լուծումը կապուած է եւրոպական պետութեանց շահերուն հետ։ Անոնք պիտի չլուծէին հայկական հարց մը՝ հայերուս սև յօնքերուն կամ աղուոր աչքերուն համար։ Այսօրուան մեծագոյն ազդակը տնտեսականն է։ Եւ մեր գործը պիտի ըլլայ պետութեանց այդ շահերուն մէջ աշխատիլ լայն չափով մը տեղաւորել մեր ալ ազգային շահերը։

Թէ երբ պիտի լուծուի հայկական հարցը՝ չգիտենք։ Միայն սա գիտենք, որ անիկա պիտի սկսի բալկանեան պատերազմի յարուցած կնճիռներուն հարթուելէն յետոյ։ Այս է գոնէ եւրոպական պետութեանց ցարդ յայտնած որոշ տրամադրութիւնը։

Եւ ես չեմ կարծեր, որ 7—8 ամիսէն կարելի ըլլայ մաքրել Բալկանեան թերակղզին իր աւերակներէն, դիակներէն, ծրագիրներէն ու կնճիռներէն։

Ես կէտ մը կուզեմ շեշտել հոս և զանիկա դնել ձեր լուրջ ուշադրութեան առջև։

Մենք չենք կրնար հանգարտ խղճմտանքով քնանալ մեր փափուկ բարձերուն վրայ, դիւանագիտական յարաբերութեանց ընթացք տալ բաւականանալով։ Դիւրին է արտասահմանի մէջ վիճիլ դիւանագիտական հարցերով, դիւրին է դասախօսութիւններ սարքել, հիանալ ու յուզուիլ ազգային կեանքի մէջ առեղծուելիք երջանկութեան և բարօրութեան հեռանկարներով։ Խորհելու է, թէ ինչ է այս պահուս, ինչ վիճակ կապրին հայերը բնաշխարհին մէջ և ինչ ահաւոր վտանգներ կը սպառնան անոնց ազգային ու անհատական գոյութեանը։

Այսօր առաւել քան երբէք ահաւոր ճգնաժամի վայրկեանն է ապրուածը հոն. ոչ մէկ տարի վտանգի ենթարկուած էր հայ կեանքը, քան այս պահուս։ Թիւրքիա անիշխանութեան մատնուած, պարտութիւններով կքած, վրէժխնդրութիւններով ուռած, կատաղի տրամադրութիւններով կապրի դէպի հայը, դէպի գեավուրը։ Եւ կատաղութեան վայրկեաններու մէջ, այդ տարրը գազան մըն է. անոր մէջ կարելի չէ տեսնել կամ երևակայել մարդկային ոչ մէկ հանգամանք կամ յատկութիւն։ Եւ վաղը քաղցած ու վիրաւոր 250,000 զօրքեր, միացած Եւրոպական Թիւրքիոյ գաղթականներուն հետ, դէպի Փոքր Ասիա ու Կիլիկիա պիտի նահանջեն, իրենց անցքին վրայ սփռելով յաղթական Բալկաններուն վրէժխնդրութեան արիւնոտ հետքերը։ 1900-ական թուականներուն լորդ Կրօմըր անստորագիր նամակ մը ընդունեց, որ կը բողոքէր Եգիպտոսի անգլիական գրաւումին դէմ, որուն մէջ սա բառերը կը կարդացուէր. «Խաղաղութեան օրերուն մէջ մուէզզինը կերգէ մինարէէն, իսլամ տղան կը լսէ զինքը ու չի հասկնար. կը լսէ ծերունին, բայց չըռնէր։ Սակայն վտանգի վայրկեաններուն մուէզզինին ձայնին մէջէն կը լսեն անոնք մարգարէին և Աստուծոյ ձայնը, և բնազդաբար ամենքն ալ կը խանդավառուին հայրենիքին և կրօնքին սիրովը. և իսլամ կինները տանիքներուն վրայ կանգնած զանոնք կռուի ու վրէժխնդրութեան կը մղեն»։

Այսօր պարտեալ և վրէժխնդիր Թիւրքիոյ մէջ մուէզզինին այդ սպառնական ձայնն է, որ կը հնչէ ամեն կողմ, մահուան ու վտանգի սպառնալիքը հանելով իրենց մարած ու քանդուած օջախներուն մօտ սգաւոր հոգիներուն խորը։ Եւրոպական ոչ մէկ դիւանագիտութիւն պիտի կրնար մարել իսլամ խուժանին կատաղութեան կրակը, որ վաղը թերևս պիտի հրդեհէ Հայաստանն ամբողջ, մոխիրներու և դիակներու շեղջակոյտի մը վերածելու համար երկիրը, որուն բարենորոգութեան ծրագիրներու մասին կորոճանք ամենքնիս։ Այսօրուան հայկական հարցը, որ անմիջական է և ստիպողական, հայուն ձեռքով հայերուն ապահովութեան հարցն է, և ես պիտի ուզէի, որ քիչ մըն ալ անով զբաղէին միտքերը։

(Վերջը միւս անգամ)

ԳՈՅՆԵՐԻ ԲՈՒԺԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ*)

Բժշկութեան մէջ ներկայումս ամենուրեք կիրառվում է լուսաբուժութիւնը (ֆօտօթերապի) և արևաբուժութիւնը (հելիօթերապի)։ Սրանք, ինչպէս տերմիններն էլ ցոյց են տալիս, օգտվում են արևի և ուրիշ աղբիւրների սպիտակ լոյսից։ Արդեօք գունաբուժութիւնը (քրօմօթերապի) ևս չունի՞ պաշտօնապէս մուտք գործելու բժշկութեան մէջ։ Այս հարցին բացասաբար պատասխանելը ուրանալ կը նշանակէ մինչև այժմ կատարված գիտական փորձերից ու աշխատութիւններից ստացված դրական արդիւնքը գունաբուժութեան նկատմամբ, իսկ դրական պատասխանը դեռ վաղաժամ է։ Ուստի բաւականանք առ այժմ գունաբուժութեան առաջադիմութիւնների համառօտ զեկուցումով։

Ֆրանսիացի գիտնական դօկտոր Բին, որ շատ է զբաղվել գունաբուժութեան վրա, նոյնպէս եկել է այն եզրակացութեան, որ կարմիր գոյնը գրգռող է, կանաչը՝ հաւասարակշռութեան մէջ պահող, իսկ մանիշակագոյնը՝ հանգստացնող, նստեցնող։ Այս մասին Վիսբադենի բժշկական համագումարում մի ընդարձակ զեկուցում տալուց յետոյ, դօկտոր Բին 1902 թւից սկսեց սիստեմատիկ կերպով գործադրել գունաբուժութիւնը։

Դօկտոր Բինից առաջ ֆրանսիացի պրօֆ. Բուշարը ապացուցել էր, որ կարմիր գոյնը ուժգին թափանցում է մարդու կաշին, առանց թեթև գրգիռ պատճառելու նրան, իսկ կապոյտը, ընդհակառակը, անկարող է թափանցել կաշին, բայց սոսկալի գրգռում է նրան։ Դօկտոր Բին գոյների գործադրութեան միջոցին այս հանգամանքն ևս ի նկատի ունենալով յաճախ նպաստաւոր արդիւնքներ էր ստանում։

Այն քիմիական գունաւոր լուծուածքները, որոնք այսօր գործ են ածվում հիւ-

---

*) Տես «Մշակ» № 28.

*) Տես «Մշակ» № 28.

թիավարող աբեղաներով, իրական է, Սեդա անունն էլ պատմական է)։ Փոթորկի ժամանակ Սեդան ընկնում է ծովը. աբեղան իսկոյն դէն է ձգում վերարկուն, նետվում է ծովը, գրկում է Սեդային և փրկում, ափն է հանում։ Երիտասարդի մէջ, կուսական մարմնի այդ հպումից, ուժգին թափով բորբոքվում է սեռական բնազդը, որ մինչև այդ ժամանակ քնած էր կամ զսպված։ Կրակի վրա իւղ է ածում իշխանը, որ իբրև շնորհակալութիւն պատրաստ է նրան ընծայել իր նժոյգը, իր սուրը և իր Սեդային, նոյնիսկ իր ժառանգը դարձնել. բայց որովհետև այս բաները նրան հարկավոր չեն իբրև կրօնավորի (վանահօր միջամտութեան շնորհիվ), ուստի շնորհակալութեամբ սեղմում է նրա ձեռքը։ Նոյն երեկոյեան իշխանն և իր Սեդան ծովով ընդմիշտ հեռանում են Սևանից։ Եվ ահա մի ծայրայեղ լարված հոգեկան դրութիւն երիտասարդ աբեղայի մէջ. մի կողմից Սեդան, որի մարմնի հպումը սարսուռ է ազդում նրան, սուր, նժոյգ, իշխանութիւն, այսինքն այն բոլորը, որ նրա համար պէտք է կազմէին մարդկային երջանկութեան լրութիւնը, և միւս կողմից՝ իր վերարկուն և եկեղեցու անվերջ սաղմոսները, որոնց համար նա զրկվում էր այն երջանկութիւնից։ Այս հոգեկան խոր ցնցումը ազդում է նրա նեարդերի վրա, և նա ընկնում է մելամաղձութեան մէջ։ Դեռ սկզբում, քանի որ հիվանդութիւնը խիստ չէ արտայայտվել, նա, կոյր աբեղայի խորհրդին հետևելով, փորձում է կռվել իրան տիրող ախտի հետ, դիմում է աղօթքի, խուսափում է Սեդայից (որ երևութանում է նրան)։ Բայց հիվանդութիւնը զարգանում է հետզհետէ, առաջ են գալիս այդ հիվանդութեանը յատուկ հոգեկան ճնշում, զգայարանքների պատրանք և հետամուտ գաղափարներ։ Մինչ նա նստած է իր խցիկում, նրա աչքին երևում է Սեդան և նրան հրապուրում. մինչ նա զբօսնում է դաշտում, միգանուշներ ու ալենուշներ են երևում նրան, որ քաշում են նրան դէպի կեանք ու վայելք. երևում է ճգնավորը, որ ունայն կեանքի փոսն է փորում, որը Սեդան լցնում է սիրոյ, փառքի, վայելքի երազներով. մինչ նա եկեղեցում աղօթքի է կանգնած՝ երևում է նրան Վահագնի տաճարը, ուր նրան առաջնորդում է դարձեալ Սեդան, ուր նա տեսնում է դարձեալ իշխանին իբրև յաղթող և ոյժի ու սիրոյ աստվածներին երկրպագող, ուր ինքն ևս նվիրվում է այդ աստվածներին և երկրպագում նրանց (իրօք ուշաթափվում է եկեղեցում և գետին ընկնում)։ Սրանք այն զգայարանական պատրանքներն են, որ յատուկ են մելամաղձիկներին։ Իսկ ծովը, փոթորկալից ծովը, որտեղ առաջին անգամ նա գրկեց Սեդային և սիրոյ սարսուռն զգաց, որտեղ նա կռվեց ալիքների հետ, որպէսզի իր թանգագին բեռը ապահով ափ հանէ, ծովն էլ նրան հետամուտ գաղափարն է։ Անձնասպանութիւնը, որ նա գործում է ծովը նետվելով, բնական վախճան է այս մելամաղձութեան։

Եթէ ճիշդ են վերը բացատրած երկու կէտը, այսինքն վանահօր և իշխանուհու ֆաբուլայի պատմական հիմք ունենալը և աբեղայի հոգեկան հիվանդ (մելամաղձիկ) լինելը, սրանցով շատ բան կը փոխվի մինչև այժմ մամուլի և բանախօսութիւնների մէջ արտայայտված տեսակէտներից, և հարկ կը լինի ուրիշ հողի վրա դնել Շանթի «Հին Աստվածների» քննութիւնը։ Այդ քննութիւնը ներկայ յօդվածի նպատակից դուրս է։

Ստ. Մալխասեանց

սուածաբանութեան տեխնիկայի մէջ, մի ժամանակ գործածվելիս են եղել բժշկութեան մէջ անցքացաւի, կանանց սեռական և ծննդաբերական գործարանների մի շարք վարակումների և քաղցկեղի (ռակ) դէմ. այդ քիմիական գունաւոր բաղադրութիւնները աւելի զօրեղ ներգործութիւն էին ցոյց տալիս մանաւանդ այն դէպքում, երբ նրանք գտնվում էին ոչ թէ իսկական, այլ կեղծ լուծված դրութեան մէջ, այլ խօսքով՝ երբ այդ նիւթերը մասնիկներն ամբողջովին չէին լուծվում, այլ վերածվում միկրոսկոպային մասնիկների և անսոյզ մնում հեղուկի մէջ (այդպիսի կեղծ լուծուածք է, օրինակի համար, սպիտակուցը)։ Այս հանգամանքը ի նկատի ունեցաւ Կոպէնհագէնում դոկտոր Դրէյէրը։ Նա փորձեց միկրօբային վարակիչ հիւանդութիւններով բռնվածներին նախ ներկել վերոյիշեալ գունաւոր լուծուածքներից կարմիրով և ապա ենթարկեց իր հիւանդներին կապոյտ և կանաչ ճառագայթների միկրօբակեր ազդեցութեանը։ Հետեւանքն եղաւ այն, որ հիւանդները, շնորհիւ կարմիր լուծուածքի, աւելի դիւրաթեք դարձան կապոյտ և կանաչ ճառագայթների միկրօբակեր ազդեցութեան հանդէպ և աւելի արագ ու հիմնական բուժումն ստացան։

Լուսաբուժութեան (ֆօթօթերափի) հիմնադիր Ֆինզէնը, հետեւելով չինացիներին, գործադրում էր կարմիր լոյսը ծաղիկ հիւանդութեան և կապոյտ լոյսը՝ կաշուի որոշ հիւանդութիւնների և մի քանի վտանգաւոր ուռոյցների դէմ. և այն զգալի աջողութիւնները, որ նա ստացաւ այդ լոյսերից, խրախուսեց շատ ուրիշ բժիշկների դիմելու նոյն մեթօդին ոչ միայն վերոյիշեալ ախտերի, այլ և սկարլատինի ու կարմրուկի նկատմամբ միշտ դրական արդիւնքով։ Յատկապէս կարմիր գոյնի գործադրութիւնը կարմրուկի դէմ փորձվեց Գերմանիայում, Ֆրանսիայում, Սպանիայում, Ֆինլանդիայում և Ռումինիայում բազմաթիւ բժիշկների ձեռքով, որոնց մեծագոյն մասի այդ առիթով տուած զեկուցումները բոլորն էլ կարմիր գոյնի այդ յատկութեան մասին նպաստաւոր են խօսում։ Այնուհետեւ շատ երկիրների հիւանդանոցներում սկսեցին կարմրուկով բռնված հիւանդներին կարմիր սենեակներում խնամել։

Սակայն եղան նաև բժիշկներ ու բնագէտներ, որոնք ժխտեցին գոյների այս յատկութիւնը և հակառակորդ հանդիսացան ոմանք առհասարակ ամբողջ գունաբուժութեան, ոմանք էլ մասնաւոր դէպքերի դէմ։ Հակառակորդ բանակի մէջ աչքի ընկնողը ֆրանսիացի դոկտոր Գուժէն է։ Մի վերջնական համոզմունքի յանգելու համար դոկտոր Գուժէն փորձեց իր խնամքին յանձնված հիւանդանոցի 24 ծանր կարմրուկաւորներին, որոնք բոլորն էլ 15 տարեկանից աւելի էին, կարմիր լոյսով բուժել. Նա սարքեց մի կարմիր սենեակ՝ ծածկելով սենեակի պատերը, դռները, պատուհաններն ու ճրագները կարմիր թղթով. աւելի զգուշութեան համար բոլոր հիւանդներին նա կարմիր շապիկ հագցրեց և 2 օր շարունակ հիւանդներին պահեց այդ կարմիր սենեակում։ Երկու օրվայ ընթացքում մահվան և ոչ մի դէպք չեղաւ, կարմրուկի բշտիկները մնացին նոյն մեծութեամբ, ինչ առաջ էին, տեղի ունեցան կարմրուկից առաջացած մի քանի բարդութիւններ—աչքի, կոկորդի բորբոքումն և դէմքի ուռչել—շատ թեթև տեսակի. բայց ծանր կարմրուկը թեթևի չը փոխվեց։ Եւ դոկտոր Գուժէն եկաւ այն եզրակացութեան, որ կարմիր գոյնը չունի կարմրուկի դէմ այն ազդեցութիւնը, ինչ որ վերագրում են ուրիշները։

Դժբաղդաբար դոկտոր Գուժէի այս վճռական նշանակութիւն ունեցող փորձը զերծ չէ խոշոր թերութիւններից. բացի այդ, դոկտորի եզրակացութիւնը խիստ յանդուգն է ու բռնազբօսիկ։ Գունաբուժութեանը կողմնակից և նրանով երկար ժամանակ զբաղված դոկտոր Լօմօնիէն արդարացի կերպով նկատում է իր աշխատասիրութիւնների մէջ, որ եթէ կարմրուկով հիւանդը երեխայ չէ, այլ արդէն հասակաւոր, պէտք է հիւանդին մի քիչ աւելի երկար թողնել կարմիր լոյսի ազդեցութեան տակ, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ կարմիր ճառագայթները ոչ թէ ուղղակի ազդում են կարմրուկը պատճառող էլեմենտների վրա, այլ գրգռում են ներվային սիստեմը և սրա միջոցով անուղղակի կերպով հետզհետէ ոչնչացնում են յիշեալ էլեմենտներին. իսկ հասակաւոր հիւանդի կաշին անհամեմատ աւելի հաստ ու կոպիտ լինելով, քան երեխայինը, անհրաժեշտութիւն է առաջ գալիս հասակաւոր հիւանդին ոչ թէ երկու, այլ հինգ, վեց օր թողնել կարմիր ճառագայթների տակ, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենան թափանցել հիւանդի հաստ կաշին և գրգռել կաշուի մէջ թաղված ներվերի վերջաւորութիւնները։

Կապոյտ և մանիշակագոյն ճառագայթները բոլորովին տարբեր մեխանիզմով են ներգործում կաշուի վրա, մինչդեռ կարմիր ճառագայթները զօրեղ թափանցող ոյժ ունեն կաշուի նկատմամբ և միկրօբակեր չեն։ Կապոյտ և մանիշակագոյն ճառագայթները՝ շնորհիւ իրանց առատ քիմիական ճառագայթումների, խիստ գրգռում են կաշին և զօրեղ թափով միկրօբակեր են, առանց ամենաչնչին չափով կաշին թափանցել կարողանալու։ Միւս կողմից, մինչդեռ կարմիր ճառագայթներն աւելացնում են օրգանիզմի՝ միկրօբների դէմ կռուելու բնական ոյժը, կապոյտն ու մանիշակագոյնը օրգանիզմի վրա այդպիսի ազդեցութիւն չունեն, այլ ուղղակի միկրօբներին են թուլացնում ու ոչնչացնում։ Դժբաղդաբար կապտաբուժութիւնը (սիանօթերափի) մինչև այսօր դեռ ոչ մի տեղ նպատակայարմար ձևով չի ձեռնարկվել այլ և այլ հիւանդութիւնների դէմ գործադրվելու համար։ Կապոյտ ճառագայթներից օգտվում են միայն ջուր, կաթ, բուլյոն և ուրիշ հեղուկներ ամուլ (ստերիլ) դարձնելու, որպէս զի նրանց մէջ այլ եւս միկրօբներ չը կարողանան բոյն դնել և բազմանալ։

Ա. Զ.

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Փետրվարի 5-ին Արքունական թատրոնում տեղի ունեցաւ օպէրային խմբի պրեմիէրշա Ալէշկօյի բենեֆիսը, որի առիթով ներկայացվեց Պուչինի երաժշտութեամբ ու սիւժէով գեղեցիկ «Տօսկա» օպէրան։

Բենեֆիցիանտուհու երեւալը առաջ բերեց ծափահարութեան պայթում թատրոնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութեան կողմից։ Շնորհալի երգչուհին այդ երեկոյ ևս, ըստ սովորականին, պատճառեց ունկնդիրներին երաժշտական ու գեղարուեստական իսկական հաճոյք։

Նա ստացաւ անթիւ ծաղկեփնջեր ու պսակներ և բազմաթիւ թանգարժէք ընծաներ։ Նոյնիսկ աշակերտութիւնը ոգևորութիւնից բաց թողեց կենդանի մի աղաւնի…

Սովորականի նման աչքի տարան իրանց դերերը Լազարեվ՝ Կավարադօսսիի և Ռաբօսլավսկի՝ կոմսի դերերում։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բոլգարները երկու օր տեւող յամառ կռւից յետոյ վերցրին Բուլաիրը, որ չորս անգամ անցաւ մի կողմից միւսը։ Թիւրքերը կորցրին 18,000 մարդ։

◆ Պետերբուրգի Թիւրքաց դեսպան Թուրխան-փաշան հեռագրեց Բ. Դրանը, թէ Սազօնովի ասելով՝ բալկանեան դաշնակիցների վերջին ընդարձակ պահանջները Թիւրքիայից ամբողջովին պաշտպանութեան են հանդիպելու Ռուսաստանի կողմից։

◆ Ինչպէս հաղորդում են եւրոպական լրագիրները, Հակկը-փաշայի միսիան անաջող անցաւ։ Մեծ պետութիւնները որոշակի պատասխանեցին, որ ներկայ րոպէին բանակցութիւնները անկարելի է վերսկսել։

◆ Այս օրերս մի օֆիցեր Պետերբուրգ է տարել Չերնօգօրիայի թագաւոր Նիկոլայի նամակը, վերաբերեալ Սկիւտարին, որ, ինչպէս պարզվում է, չէ դառնալու չերնօգօրացիների սեփականութիւն, չը նայած վերջինների տուած խոշոր զոհերին։

◆ Մարմարա ծովափի քրիստոնեաները ենթարկվում են թիւրքերի գազանութիւններին։

◆ Երիտասարդ-Թիւրքերի կենտրոնական կոմիտէն կարգադրեց տեղական իշխանութիւններին անարգել, առանց դատարանի գնդակահարել տալ բոլոր այն զինուորականներին, որոնք չեն հնազանդվի իրանց իշխանաւորներին կամ կը յանդգնեն պարապել քաղաքականութեամբ։ Գնդակահարվելու են նաև բոլոր փախստական օֆիցերները և զինուորները։

◆ Պետերբուրգում տեղեկութիւն ստացվեց, որ Լօնդօնում դեսպանների խորհրդակցութեան նիստում աւստրիական դեսպանը Ալբանիայի հարցում բոլորովին հակառակ դիրք բռնեց ռուսաց դեսպանի դիմաց և վերջում ցոյցով դուրս ելաւ դահլիճից։

◆ Վիէննայում խօսում են, որ ռուս-աւստրիական սահմանագլխում տեղի է ունեցել ընդհարում։

◆ Լօնդօնի դեսպանական խորհրդակցութեան մէջ վճռվեց Ալբանիան յայտարարել վեց մեծ պետութիւնների հսկողութեան ներքոյ։

◆ Ռումինիան պաշտօնապէս պատերազմի է պատրաստվում Բոլգարիայի դէմ։ Աւստրիան ամենայամառ կերպով յորդորում է Բոլգարիային կատարել Ռումինիայի բոլոր պահանջները։ Դրութիւնը չափազանց լուրջ է։

◆ «Н. Вр.»-ի թղթակիցը հեռագրում է, որ Սերբիան պարտաւորվեց ուղարկել Բոլգարիա 80,000 զինւոր և 150 թնդանօթ, որի փոխարէն բոլգարիան Սերբիայի սեփականութիւն է ճանաչում նրա գրաւած բոլոր երկիրները։

◆ Էքս-շահ Մահմէդ-Ալին գտնվում է դրամական տագնապի մէջ։ Չը ստանալով կանոնաւորապէս իր ռոճիկները Թեհրանից, էքս-շահը գրաւ է դնում իր տոհմի թանգագին իրերը։

◆ Պետերբուրգի կանանց բարձր դասընթացքներից արձակվեցին 250 ունկնդրուհիներ ուսման վճարը չը տալու պատճառով։

◆ Սահմ. ռամկ. համաժողովը վճռեց Դումայում ցոյց տալ աւելի ակտիվ գործունէութիւն, պաշտպանելով ընդհանուր ընտրողական իրաւունքի, Պետական Խորհրդի վերակազմման և պատասխանատու մինիստրութիւն հաստատելու օրինագծերը։

◆ Հեռաւոր Արևելքում դրութիւնը ստանում է ամենալուրջ կերպարանք։

◆ Գերմանիան ձեռնարկել է կառուցանելու բոլորովին նոր տեսակի ռազմանաւեր։ Այդ հանգամանքը իրարանցում է առաջ բերում Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավար շրջաններում։

◆ Վիէննայում քաղաքային ինքնավարութիւնը իր հաշւով թաղեց սօցիալ դեմօկրատ Շումայէրին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

5 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եկաւ ներքին գործերի մինիստրի օգնական Ջունկովսկին։

Ժողովրդական լուսաւորութեան մասնաժողովն ընդունեց տարրական ուսման համար լրացուցիչ կերպով 8 միլիօն րուբլի յատկացնող օրինագիծը։

Դումայի մասնաժողովը Ռօմանօվների Տան 300-ամեայ յօբելեանը յաւերժացնելու նպատակով որոշեց հիմնել պետական բնաւորութեան Ռօմանօվների ֆօնդ՝ հողային բարելաւումների համար, ցանկալի համարել ուժեղացնել մանր մելիօրատիվ վարկը՝ մանր հողատիրութիւնը բարելաւելու համար, հիմնել մանկավարժական ինստիտուտ օրինակելի մանկապարտէզով, ստորին ու բարձր տարրական ուսումնարաններով ու գիմնազիայով, բանալ ուսուցչական սեմինարիա ամեն մի նահանգում և շրջանում, հաստատել Մոսկվայում ազգային թանգարան Ռօմանօվների Տան անունով՝ մատուռով հանդերձ։

Հոկտեմբերեանների ֆրակցիայի նախագահ ընտրվեց Անտոնովը, օգնական՝ կոմս Բէնիգսէնը։

«Русская Молва»-ի խմբագիր Ստախովիչը ենթարկվեց 500 ր. տուգանքի փետրվարի 4-ին տպած «Еще распутье» յօդուածի համար։

«Русское Знамя» թերթի խմբագիր Պետրօվի դէմ յարուցված է դատ 129 րդ յօդուածի 6 րդ կէտի մեղադրանքով։

ԼՕՆԴՕՆ։ Վիլիամ Լանսբէրին և սուֆրաժիստուհի Պանկօրստը պատուհանների ապակիները ջարդելու համար դատապարտվեցին երկու ամսով բանտարկութեան և ստիպողական աշխատանքների, իսկ Լանսբէրի քոյրը՝ մի ամսով բանտարկութեան։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես 53 տարեկան եմ, կինս—54.

Ես և կինս մի քանի տարի հիւանդ էինք ստամոքսի կատարրով, բայց այժմ, շնորհիւ «Դ-ր Մէյէրի Ստամոքսիգէնի», մեր ստամոքսները բոլորովին լաւացվեցին։ Ձեզ չը գրեցի նրա համար, որովհետև սպասում էի բուժումը աւարտելուց յետոյ մի քանի ամիս անցնէր։ Անցնելով յիշեալ ժամանակամիջոցը՝ կատարեալ կերպով կարող եմ ասել, որ ձեր պրէպարատը հրաշալի դեղ է ստամոքսի կատարրի դէմ և գլխաւորապէս բուժում է մարսողական բոլոր հիւանդութիւնները։ Ես 53 տարեկան եմ, բայց կինս՝ 54։

Ուսուցիչ Ն. Գրիգիև։ Սարանսկ, Պենզենի նահ.
«Իսկական. գործքիւնները չեն կրկնվում։ Ամեն օր—նոր»։
(Ц. 18979)

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ПѢСНОПѢНІЯ Св-мъ СААКУ и МЕСРОПУ
Բազմաձայն մշակմամբ Ռ. Դ.

(Որ զնշխարս Աստուածային. Որք զարդարեցին. Նմանեալ Մովսէսի։ Ցանկալուած՝ Հրաշափառ Աստուած. Տաղ Հայրապետաց) Քառաձայն խառն խմբի համար պարտիտուրան . . . 50 կ.

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ
ԵՐԳԵՑՈՂ. ՀԱՅԱՍՏԱՆ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ПѢСНОПѢНІЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ
Քառաձայն խառն խմբի համար

Տէր ողորմեայք (Запричастный, 3 №) . 30 կ.
Հանգստեան (Панихида, 8 №) . . . 60 կ.
Պսակի (Вѣнчаніе, 6 №) . . . . 70 կ.
Հրաշափառ Աստուած (Св. Григорію Просв.) 20 կ.
Օրհներգ հայրապետական «Բարէ» (Армянская патріарш. кантата) . . . . 40 կ.

Պահեստ՝ МОСКВА, Неглинный пр., 14.
Музыкальная торговля „П. Юргенсонъ“.
(հ.) 96. 3—1

Լոյս ընծայեց
Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
աշխատութեան հետեւեալ մասերը.
1) «Ազգագրութիւն» . . . — 60 կ.
2) «Նշանաւոր վանքեր» . . — 60 կ.
3) «Բանահիւսութիւն» . . 1 ր. —
4) «Լուսանկար ալբոմ», I Վանայ շրջան 60 ր. —
5) » II Հաքեարի շրջան 60 ր. —
6) «[illegible] կարգերը հայոց մէջ» — 25 կ.
Հասցէն՝ Лермонтовская № 1. Тифлисъ.

Առաջարկում եմ
խմբագրութիւններին և հրատարակիչներին
ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1) Արասխանեան և իր դարը։
2) Լերմոնտովի «Демонъ»-ի հայկական աղբիւրը։
3) «Դաւիթ և Մհեր» ազգային վէպը։
4) Զորրորդ դարի պատմութիւնը մեր ժողովրդական նիւթերի մէջ։
5) «Հովացի Եղօ», մասն Բ., վէպ Բալախանու կեանքից։
Դիմել՝ Շուշի, ուսուցիչ Գրիգոր Տէր Պօղոսեանին։
(օ. մ.) 80. 5—4

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րէցէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» րէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կոպ.։
3) «Կնիկարմատի սալվարը կամ մօդնի իւբկէն», խիստ ծիծաղաշարժ վօդէվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօնայի ժանդարմը» յայտնի վօդէվիլը, շատ ծիծաղաշարժ. 2-րդ հրատարակութիւն։ Գինը 20 կ.
5) «Հայ կտրիճներ», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. հայ քաջերի կռիւը։ Գինը 7 կ.։
6) «Միեւնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գլխաւոր նկարներով։ Գինը 7 կ.։
7) «Մշտական զօրք եւ միլիցիա» Պիմէնովից թարգմանած։ Գինը 5 կ.։
Ուղարկվում են բոլոր գրքերը միասին (հատ-հատ ուզողները դիմեն «Գուտտենբերգ» գրախանութին)։ Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(օ. մ.) 44. 100—8

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն, որ նա վաճառում է նոր կառուցած դպրոցական շէնքի մօտ դպրոցապատկան հողաբաժինները։ Վճարքը կատարվում է կանխիկ կամ 5 տարվայ ընթացքում մաս մաս 7% վերադիր յաւելումով։

Վերջնական գները և մակարդակը, քաղաքային վարչութեան կողմից հաստատված, կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից։ (օ.մ.) 51. 10—8

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
որը կայանալու է 1913 թւի փետրվարի 13-ին, չորեքշաբթի օրը, երեկոյեան ժ. 7½-ին, ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փողոց, տուն Արաֆելովի, № 9.
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ ԿԸ ԼԻՆԻ
Ծանօթացնելու պ. պ. բաժնետէրերին Բիբի-Էյբաթի հանքի վաճառման հետ և ապագայ կարգադրութեան մասին վճիռ կայացնելու։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, փետրվարի 17-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։ (7, 13) 73. 3—2

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը սրանով յայտարարում է, որ Ակիմօվսկայա, Ուզոլնայա և Ռուժէյնայա փողոցների անկիւնում գտնված Ընկերութեան ԽՈՒԴԱԴԵԱՆ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՆ, խանութներով և նկուղներով, ՏՐՎՈՒՄ Է ԿԱՊԱԼՈՎ։ Գլխաւոր մուտքը Արմեանսկի բազարից։ Ցանկացողները պէտք է յայտնեն այդ մասին մինչև փետրվարի 9-ը, երեկոյեան ժամը 7-ը, երբ կը կայանայ և մրցութիւնը։

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Ընկերութեան գրասենեակում, Արաս-Արաքեան հրապարակ տ. № 7. (փ. 7) 69. 2—2

Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով խնդրում է պ. պ. բաժնետէրերին ներկայ լինել
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,
որ տեղի կունենայ ներկայ 1913 թ. փետրվարի 10-ին, առաւօտեան ժամը 11 ին, Թիֆլիսի Բօրսայի շէնութեան մէջ (Պուշկինսկի փող. № 5)։
ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Վարչութեան զեկուցումը.
2) Վարչութեան զեկուցումից առաջացող հարցերի վճիռը.
3) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը.
4) Քննութիւն և հաստատութիւն 1912 թ. հաշւի և հաշւեկշռի.
5) 1913 թւի ծախքերի նախահաշիւը և գործունէութեան նախագիծը.
6) Կարգաւորումն 1912 թ. օգուտների.
7) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւն՝ ի տեղի հերթով հեռացող անդամի, և վարչութեան մէկ անդամի թեկնածուի ընտրութիւն.
8) Վերստուգող յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւն.

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ պահանջված ձայների թւի պակասութեան պատճառով, այդ դէպքում երկրորդ ժողովը կը նշանակվի փետրվարի 24-ին 1913 թ. նոյն տեղում, առաւօտեան ժամը 11-ին, որպիսի ժողովը կը համարվի օրինական՝ որքան անդամ էլ ներկայ լինի։

Վարչութիւնը պ. պ. բաժնետէրերի ուշադրութիւնն է հրաւիրում Ընկերութեան կանոնադրութեան § 59-ի վրա։

Անուանական ակցիաների տէրերը օգտվում են Ընդհանուր Ժողովում ձայների իրաւունքով միայն այն դէպքում, եթէ նրանք՝ գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը՝ մտցված են վարչութեան մատեանների մէջ, որի համար և Ընդհանուր Ժողովին մասնակցելիս չէ պահանջվում ներկայացնել անուանական ակցիաները։

Ակցիաները ներկայացնողին ձայնի իրաւունք է տրվում այն դէպքում, եթէ նոյն ակցիաները ներկայացված են Ընկերութեան վարչութեանը՝ գոնէ եօթն օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը և յետ տրված մինչև Ժողովի աւարտը։ Բնագիր-ակցիաների փոխարէն կարելի է ներկայացնել վկայագրեր (ստացագրեր) ակցիաները ի պահեստ կամ գրաւ դրված լինելու համար ինչպէս պետական, նոյնպէս և կառավարութեան հաստատած կանոնների հիման վրա գործող կրէդիտային (տեղական և օտար քաղաքների) հիմնարկութիւնների, այլ և արտասահմանեան կրէդիտային հիմնարկութիւնների և բանկային տների կողմից ստացված, որոնք ընդրված կը լինեն բաժնետէրերի Ընդհանուր Ժողովներից և հաւանութիւն գտած ֆինանսների մինիստրութիւնից։ Վկայագրերի մէջ պէտք է նշանակված լինեն ակցիաների համարները։ Արտասահմանեան բանկային հիմնարկութիւնները, որոնց վկայագրերը կարելի է ներկայացնել փոխարէն բնագիր-ակցիաների, պէտք է նշանակված լինեն Ընդհանուր Ժողովի հրաւէր-յայտարարութիւններում։

Միաժամանակ վարչութիւնը վաղօրօք յայտնում է պ. պ. բաժնետէրերին, որ ձայնի իրաւունք ունենալու համար տրված հաւատարմագրերը և գրաւոր յայտագրերը պէտք է ներկայացված լինեն վարչութեանը բաժնետէրերի Ընդհանուր Ժողովից 7 օր առաջ Ընկ. վարչութեան գրասենեակին ցեր. ժամը 11—1-ը։
(27. փ. 7) 34. 3—3

Գ. ԳՈՐՆԻԳ
Գոլովինսկի պր. 11, զինուոր-պատմական մուզէումի մօտ

Г. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
СУЩ. СЪ 1873 Г.
СПЕЦ.: ОКУЛИСТ. ОПТИКА.
ЕДИНСТ. НА КАВКАЗѢ
ШЛИФОВАЛЬНЯ
ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛЪ
БИНОКЛИ ДЛЯ
ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ
ВСѢХЪ ЛУЧШИХЪ
СИСТЕМЪ И ФАБРИКЪ.
ГОЛОВИНСК. ПР. II ОКОЛО ВОЕННО-ИСТ. МУЗЕЯ.

(հ. կ.) 38. 10—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный